ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ապրիլի 28-ին Վեհափառ Մատթէոս Բ. Կաթուղիկոսի հաստատութեան ուրախարիթ լուրը միաբանութեան և վաղարշապատի հասարակութեան աւետեց Մայր Տաճարի զանգակների զողանջիւնը. իսկ նոյն ամսի 29-ին կարգադրուած էր հանդիսաւոր պատարագ անել, ուր առաջին անգամ յիշուելու էր Տէր Տէր Մատթէոս Կաթուղիկոսի անունը։ Պատարագիչն էր Ամենապատիւ Տէր Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսը, երգում էր ճեմարանի աշակերտական խումբը Կոմիտաս վարդապետի ղեկավարութեամբ. երկսեռ խուռն բազմութեամբ լցուած էր եկեղեցին. ներկայ էին նաև ծխական դպրոցի աշակերտ աշակերտուհիներն իրանց ուսուցիչներով և ամբողջ միաբանութիւնը։ Պատարագի այն տեղում, ուր պիտի յիշուէր Ամենայն Հայոց Կաթուղիկոսի անունը, պատարագիչ սրբազանը դարձաւ դէպի ժողովուրդը և աւետեց Ամենայն Հայոց Կաթուղիկոսի հաստատութեան լուրը, որի համառօտութիւնը հետևեալ է։ «Կ՚յիշեմ, ասաց սրբազանը, սաղմոսերգուի խօսքը թէ՝ ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն. երէկեան երկոյ լայի և ոգոյ մէջ էինք, իսկ այսօր այն սուգը ուրախութեան փոխուեց։ Բարեխօսութեամբ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Աստուած մեր սուգը ուրախութեան փոխեց և որովհետև թագաւորի սիրտը Աստուծոյ ձեռքն է, «Սիրտ թագաւորի ի ձեռն Աստուծոյ է» կայսերական հրովարտակը մեզ աւետեց ազգընտիր Հայրապետի հաստատութեան լուրը իւր վեհ և սուրբ կոչման աստիճանի մէջ։ Այսօր հայաստանեայց այրիացեալ եկեղեցին ունեցաւ իւր արժանաւոր փեսան, այսօր լուսաւորչայ գահի սև քողը բառնալով (այս ասելով պատարագիչ տեղակալ սրբազանը իւր ձեռքով վերցրեց գահը ծածկող սև քողը) ունեցաւ իւր արժանաւոր գահակալը։ Ուստի օրհնենք հայոց ազգը, որ ընտրեց իւր եկեղեցու

համար արժանաւոր Հայրապետ, օրհնենք Օգոստափառ թագաւոր կայսեր կեանքը իւր բարեփառ թագաւորութեամբ, օրհնենք նորընտիր Հայրապետի կեանքը և մաղթենք ոյժ, կարողութիւն և իմաստութիւն, որ ազգի յոյսն ու ակնկալութիւնը պսակելով արդիւնաւոր կերպով գործ է յօգուտ ազգի և ի պայծառութիւն եկեղեցւոյ»։

Պատարագից յետոյ Օգոստափառ կայսեր և կայսերական տանարեւշատութեան համար գոհացողական մաղթանք կատարուեց։

Ապրիլի 28-ին Ամենապատիւ Տէր Տեղակալը վեհափառ Հայրապետի հաստատութեան հրովարտակն ստանալով շնորհաւորական հեռագիր ուղարկեց Մատթէոս Կաթուղիկոս Իզմիրլեանին, նաև շրջաբերական հեռագիրներով յայտնեց Պատրիարքներին և աշխատասիրաներին ու ռուսաստանի թեմական առաջնորդներին Ամենայն Հայոց Կաթուղիկոսի հաստատութեան լուրը, պատուիրելով պատարագի մէջ յիշատակել Ազգնտիր Հայրապետի անունը և գոհացողական մաղթանք կատարել Օգոստափառ կայսերական տան համար։

Ապրիլի 30-ին Ամենապատիւ Տէր Տեղակալը նշանակեց հրաւիրակներ Ամենայն Հայոց Կաթուղիկոսին Պոլսից Պետերբուրգ և ապա Էջմիածնին ուղեկցելու համար Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին, Աղցախի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսին և սինոդի անդամներ Մեսրոպ և Բարգէն վարդապետներին։

Մայիսի 2-ին բարձ. Մեսրոպ և Բարգէն վարդապետները ճանապարհուեցին Թիֆլիս։

Մայիսի 5-ին Պոլիս գնացող հրաւիրակները ներկա-

յացել են Կովկասի Փոխարքային, իսկ 7-ին մեկնել են Բաթումի վրայով Պոլիս։

Կարսի փոխանորդ ընտրուած է բարձ Ուխտանէս վարժապետ Տէր Գասպարեան, իսկ Ալէքսանդրապոլի փոխանորդ՝ ընձակ վարդապետ Եաղճեան, որոնք հաստատուած է ամենապատիւ Տ. Տեղակալի կողմից իրանց պաշտօնում։

Մայիսի 6-ին Ն. Կ. ՄԵԾՈՒԹԵԱՆ ծննդեան օրը Մայր Տաճարում հանդիսաւոր պատարագ մատոյց Ամենապատիւ Տէր Տեղակալը, իսկ պատարագից յետոյ կատարուեց գոհաբանական մաղթանք։

Պոլսից Մայիսի 22-ին Ամենապատիւ Տէր Տեղակալն ստացել է հեռագիր, որով յայտնում են, որ Նորին Վեհափառութիւնը մայիսի 23-ին մեկնելու է Օդեսա, Պետերբուրգ։

Հրաւիրում ենք ընթերցողների ուշադրութիւնը ներկայ համարում տպուած Մատթէոս Արքեպիսկոպոս (այժմ Կաթուղիկոս) Իզմիրլեանի կոնդակի վրա, որ տուել է ներկայ տարուայ յունուարի 1-ին իր երկրորդ անգամ պատրիարքական պաշտօնին հրաւիրելու առիթով։ Այս կոնդակը ուշագրաւ է այն տեսակէտից, որ ոչ միայն ողջոյններ ու բարեմաղթութիւններ է պարունակում իր մէջ, այլ այնտեղ ցոլանում է Ներկայ Հայոց Կաթուղիկոսի աշխարհահայեցողութիւնն ու ուղղութիւնն եկեղեցական ազգային գործերի և հաստատութիւնների նկատմամբ։

Այս համարում հրատարակում ենք Պոլսոյ պատրիարքական փոխանորդ գերապատիւ Արշարունու գրութիւնը յանուն Ամենապատիւ Տ. Տեղակալի Ադանայի կոտորածների մասին, այս և լրագրական տեղեկութիւններն ի նկատի ունենալով Սինոդը որոշել է իր սուղ միջոցներից ուղարկել ապետեաններին օգտին հինգ հարիւր ռուբլի։